

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԹՈՎՋԱՆՔԸ, ԹԷ ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԸ

1. Հարստութեան թովջանքը
2. Հարստութիւն, Հաւատք և Սէր
3. “Զէք Կրնար Մտռայել Թէ՛ Աստուծոյ
և Թէ՛ Մամոնային”
4. “Զեմ Ուզէր Գիտնալ Ուրիշ Բան Միայն
Խաչեցեալ Յիսուս Զրիստոսը”

ENCHANTMENT OF THE RICHES OR THE CROSS OF JESUS?

**ԱԼՊԷՌ ԿՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**

1991

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԹՈՎՉԱՆՔԸ

“Հարուստ” բառը Հայ լեզուի մէջ կու գայ *հայ* արմատէն, որպէս հարուածող կամ հարուածելու կարողութիւն ունեցող՝ *ուծելոյ, հզօր, կարող այսինքն՝ բունութեամբ իջխող բունակալ մը*.

Հարստութեան և ունեւորութեան հմայքը կը նշանակէ, թէ իրեն տիրացողներուն ան կու տայ դիւթանքի ու թովչանքի իջխանութիւնն ու զօրութիւնը, որպէսզի կարենան առաւել եւս դրամի փոխել աղֆատներու համբերութիւնը, կոյսերու գեղեցկութիւնը և գործաւորներու բրտինքը:

Պատմութեան մէջ անմոռանալի հետքեր ձգած են ընչափազ հողատերեր, իրենց տմարդի և անխիղճ վերաբերմունքով, կցելով որբեւայրիներու տուները իրենց կալուածներուն:

Ինչո՞ւ համար Եւրոպայի հազարաւոր բնակիչները լքեցին իրենց հայրենիքը և կամաւորապէս գաղթեցին դէպի Նոր Աշխարհ՝ Ամերիկաներ:

Պատճա՞ռը:

Որովհետեւ Եւրոպայի աւատապետական դրութիւնը (feudal system) կեղեքած էր եւրոպացին ու Ռուսիոյ միլիոնաւոր ճորտերն ու ուսմիկները, որոնք ափ մը հող իսկ չունէին հերկելու, մշակելու և իրենք զիրենք ապրեցնելու համար: Նոյնիսկ՝ եթէ գտնուէր անօթի մէկը որ ձուկ որսար ճորտատէրի մը լիճէն կամ գետէն, անօթի թշուառին ձեռքերը կը կտրէին...: Ձմռանան վիզթոր Հիւկոյի "Ժանվալժան"ը: Այսպիսի ահաւոր ընկերաֆաղափական դրութենէ մը իրենք զիրենք ազատագրելու համար, Եւրոպայի և Ռուսիոյ միլիոնաւոր շինականները գաղթեցին դէպի Ամերիկաները:

Անվերադարձ դարերէ ի վեր ա՛յս եղած է հարստութեան բմծիծաղը ու կը շարունակէ ցարդ: Մադայելական ժպտադէմ դիմակով ու հարստահարութեան և դրամահաւաքի համար ճարտարարուեստի հիմնարկութիւններ կ'արտադրեն անհամար մահացու զէնքեր և կը բշեն հազարաւոր երիտասարդները հեռաւոր երկնակամարներ, կոուելու համար *հրճ'նց* պատերազմը Վիէթնամի և Քորէայի մէջ, ոչ թէ արդարութեան և իրաւունքի համար, այլ բազմացնելու համար իրենց հարստութիւնը՝ *տիրապետութիւնը*:

Այսպիսի իջխանութիւն մը, բունակալական վարչաձեւ մըն էր, որ Սատանան խոստացաւ Յիսուսի Անոր մկրտութենէն քառասուն օր յետոյ երբ աղօթելու համար առանձնացած էր անապատին մէջ: Մակայն յաղթական Յիսուս Բրիստոս մերժեց սոյն ամօթալի առա-

շարկը: Որովհետեւ Ան կը հաւատար *սիրո՛ւ* զօրութեան ու գոհողութեան հմայֆին, որ փրկարար է ու կենսապարգեւ, փոխանակ կողմնակից ըլլալու ճորտատէր բռնակալներու և իշխելու արտասուագին ստրուկ շինականներու: Յաղթական Քրիստոս նախընտրեց Ի՛նք տառապիլ և ունենալ հաւատարիմ և Ձիւն *սիրո՞ղ* քաղաքացիներ:

Մեծահարուստ քարիւղի առեւտրականներ զիրար կոտորած են Արեւմուտֆի մէջ: Դիւահար կատաղութեամբ գրաւած են Միջին Արեւելֆի քարիւղի հորերը ու գերի տարած տեղւոյն բնիկ ժողովուրդները:

Անկուշտ դրամատէր սեղանաւորներ (bankers) գրչի մէկ շարժումով սնանկութեան մատնած են հասարակ ժողովուրդը, գրաւելով և իւրացնելով անոնց հողերն ու ինչքերը:

Ճատ մը բարեգործական հիմնարկութիւններու բարձրագոյն իշխանութեան գաւազանակիրներ բռնաբարած են կոյս ուսանողուհիները և որբեւայրի մայրերը որովհետեւ իրենց ձեռքն էր դրամի զօրութիւնը:

Այսպիսի խարդախ հարստութեան դիւթանքով թակարդուած երիտասարդ իշխան մըն էր, որ փափաքեցաւ հետեւիլ Յիսուսի, և ապրիլ պատրանֆի ու նաեւ ճշմարտութեան երկակենցաղ կեանք մը: Հարուստ իշխանագունը, կարծելով, որ տիրացած է յաւիտենական կեանքի իր առաջին հարցումով, կ'ուղէ երկրորդ հարցում մը եւս Յիսուսի, ըսելով.

«Արդ, ի՞նչ բանով պակաս եմ դեռ»:

Յիսուս կը դիտէ այս երիտասարդ իշխանաւորը: Կը տեսնէ անոր հոգեկան պայքարը: Յիսուս կը սիրէ երիտասարդ իշխանը, սակայն Ան կը սիրէ լաւագոյնը՝ ճշմարտութիւնը, որ ստեղծագործ ու կենարար հոգին է աւելի քան այս իշխանաւորը, ու կ'ըսէ անոր.

***«Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝ գնա՛, թախէ՛
բու ու նեցուած՛դ և առ՛ւր աղֆատներուն ...
և դու ն ետեւէս եկո՛ւր»***--Մատթ. ԺԹ.21:

Երիտասարդ իշխանը կ'իմանայ պայմանը հետեւելու այս Նագովրեցի Մարգարէին, որ զինք կրնայ կատարեալ ընել: Սակայն հաճոյապաշտութեան մղումը յաղթահարելով անոր հոգեկան ձգտումները, կ'անջատէ զինք Յիսուսէ ու ան տրտմած կը հեռանայ կեանքի Ակնադրիւրէն փնտռելու համար կատարեալ ուրախութիւնը դրամական փոխատուութեամբ:

Միթե այսպես եղած չէ՞ դրամատեր և կալուածատեր մեծահարուստներու կեանքի վախճանը: Երբ մօտեցած է ժամը ուր մահասարսուռ ջղարջը փաթաթէ պիտի, հե՛ք թշուարական մեծահարուստները միայն մահուան ոտնաձայնին ատենն է որ դրամատերեր սրամաղբած են իրենց հարստութիւնը եկեղեցաշինութեան, կրթական նպատակներու և անօթիները կերակրելու: Ոչ թէ իրենց մարդասիրութեան պատճառաւ, այլ որովհետեւ իրենց ունեցածը անկարող են տանիլ իրենց հետ:

Այս իշխանաւորները թէեւ տուած են իրենց բոլոր ունեցածը ազգին, եկեղեցիին ու դպրոցին, սակայն երբեք առիթը չեն ունեցած հետեւելու Յիսուսի, որովհետեւ իրենց ամբողջ կեանքի ընթացքին ապրած են որպէսզի իրե՛նք ճանչցուին առաջնորդ և մեծ:

Այս պատճառաւ Յիսուս Զրիստոսի բնուշ ձայնը, սկսեալ Հրեաստանի բլուրներէն. *«Հնչում է իբրեւ անդրեղի զանգակատու ն հոգեպարար մեղեդի»* լեցնելով աշխարհի համայն տարածքը և մարդկային ներաշխարհի խոր սրբարանը արձագանգելով և դրոջմելով.

«Երանի՛ հոգիով աղբատներուն, որովհետեւ անո՛նցն է երկինքի արքայութիւնը»:

Նագովրեցի Մարդեղեալը Բաջատեղեակ էր հարուստներու խաբէութեան և անոնց Բմահաճոյքի զօրութեան: Անոնք թմրեցուցեր ու լուեցուցեր էին իրենց միտքն ու խիղճը: Յիսուս Զրիստոս ճանչցաւ աշխարհի և անոր բնակիչներու ստրկութեան տառապանքը, որ արդիւնքն էր մարդկային ազահութեան, ընչատիրութեան և միահեծան բռնակալութեան:

Վերոյիջեալ վարչաձեւի դրութեան և կացութեան հայեացքով Յիսուս դիտեց մարդկային փոխ-յարաբերութիւնները: Տեսանողի մարգարէաշունչ իշխանութեամբ Ան յայտարարեց. *«Երանի հոգևով աղբատներուն ն հոգեպարար նոր պատգամը:* Յիսուս մարդկային մտածումը վերիվայրող մըն էր, ոչ թէ խանգարելու կամ տապալելու համար, այլ ուղղութիւն և պարկեշտութիւն ցոյց տալու համար մարդկային մտածումին: Փրկելու և ազատագրելու համար մարդկութիւնը ինքնակործան աղէտէն:

Յիսուս չբողոքեց հարստութեան և ունեւորութեան դէմ, այլ հարստութեան ամբարտաւան և կոկոզավիզ անխղճութիւնը և անողորմ անզգայնութիւնը դատապարտեց: Յիսուս՝ Ի՛նք, որպէս Յէրն ու Ճարտարապետը աշխարհի և անոր հարստութեան, ցոյց տուաւ *«Հոգւոյ աղբատութեան՝* ներոյժ և դրական զօրութիւնը Ի՛ր

ապրումուկ և նոյնիսկ իր *Մտու նորովը*: Բոլոր կրօնաբներու և հաւատալիքներու մէջ, Յիսուս Զրիստոս եղաւ Ռահվիրան, որ ցոյց տուաւ աստուածային սերը, ողորմութիւնը և անյիշաչարութիւնը:

Որպէս Ռահվիրայ Ան ջանաց դաստիարակել մարդկութիւնը, որ ըլլան *"հոգիով աղփատ"* նոյնիսկ հարստութեան և ունեւորութեան մէջ, ինչպէս Ինքն էր: Որովհետեւ հոգեկան աղփատութեան զգայնութիւնը և փորձառութիւնը ենթական կը նոյնացնէ աղփատին, չփառորին և կարօտեալին հետ: Այս "հոգեկան աղփատութեան" իմանալիութեան և հասկացողութեան մէջ միայն, մարդ արարածը կրնայ տեսնել զԱստուած իր *ընկեր-մարդու* մէջ:

Մինչեւ Աստուածայայտնութիւնը Յիսուս Զրիստոսի, աշխարհի մէջ մարդկութեան հանդէպ սեր չկար: Մարդ կը սիրէր միայն իր արիւնակիցը: Քաղաքացին, կը սիրէր միայն այն անձերը որոնք քաղաքի պարիսպէն ներս կը գտնուէին: Մարդկութիւնը դարձաւ մարդասէր (ոչ կատարելապէս դեռ) մի միայն Յիսուս Զրիստոսի *Մարդեղանալովը*: Նոյնիսկ ցարդ ունինք՝ Կեսարացիներու ակումբ, այնթապցիներու ակումբ, ուրֆացիներու ակումբ, պոլսեցիներու ակումբ, եւլն ընդհանուր գաղթաշխարհի մէջ...:

Փոխանակ հարուստը իր ընկերը ստրկացնելու, ճգմելու, կողոպտելու և կործանելու, իր հոգիի՝ աղփատութեան շնորհիւ, պարտի դառնալ համեստ, խոնարհ, սիրող ու կարեկից: Այսպիսի՝ հարուստներուն համար է որ մեր Տէրը կ'ըսէ.

«Եկէ՛ք, իմ Հօրս օրհնեալները, ժառանգեցէ՛ք արքայութիւնը, որ ձեզի համար պատրաստուած է աշխարհիս սկիզբէն: Վասնզի անօթեցայ և ինծի ուտելիք տուիք, ծարաւցայ և ինծի ջուր տուիք, օտար էի՝ ներս առիք զիս. մերկ էի՝ հագուեցուցիք, հիւանդ էի՝ այցելութեան եկաք, բանան էի՝ տեսութեան եկաք» --Մատթ. ԻԵ 34-36:

Անցեալ դարերուն, միայն *հարուստներն*, էին որոնք կրնային վերոյիջեալ ծառայութիւնը մատուցանել կարօտեալներուն և թշուառներուն: Զակֆէոս և Մատթէոս մաքաւորները, որոնք մեծահարուստներ էին իրենց ժամանակուան, ոչ թէ աղփատութեան ցնցոտիներ հագուեցան ու ծառայեցին իրենց Տիրոջ Յիսուսի, այլ՝ միայն իրենց *հոգիները* աղփատացուցին: Անգթութեան փոխարէն՝ ողորմութեամբ, հպարտութեան փոխարէն՝ երկայնամտութեամբ և բունակալութեան ու կողոպուտի փոխարէն՝ կարեկցութեամբ վարուելով: Անոնք փոխակերպեցին իրենց սրտի՝ն նիւթապաշտ

բազինը աստուածային աննիւթական տաճարի: Որովհետեւ դիւրին է զգեստաւորումով աղֆատ ձեւանալ ինչպէս բազմաթիւ Միջնադարեան ուխտաւորներ և արդի հաւատացեալներ, որոնց հոգիներուն գոռոզութիւնը և մեծամտութիւնը ոչ սահման ունի ու ո՛չ ալ վերջ:

Ուրիշ երկու անձեր ալ գտնուեցան Յիսուսի մահուան ժամանակ, որոնք դարձան առարկայական ու տեսանելի *հոգիով աղֆատներ*:

Դատապարտեալ և հերձուածող կարծեցեալ Նազովրեցի Մարգարէն, մասնուեցաւ ու դաւաճանուեցաւ Իր գանձապահին կողմէ, ուրացուեցաւ ամենաբաջ ու հաւատարիմ կարծուած Պետրոս աջակերտէն ու լքուած մնաց խաչին վրայ երկու աւազակներու միջեւ, գտնուեցան միայն երկու մեծահարուստներ, որոնք ո՛չ անխիղճ ու ո՛չ կեղեքող էին: Այս "հոգիով աղֆատ" հարուստները իրենք զիրենք նոյնացուցին այս անարգուած Դատապարտեալին հետ առանց զգալու նուաստութիւն կամ անարգանք: Այս հարուստները ցոյց տուին իրենց սէրը, համակրանքը և հաւատարմութիւնը հանդէպ Դատապարտեալին ու ինչպէս Պիղատոսէն որ թաղեն Անոր Մարմինը ըստ իրենց՝ հրեական հաւատքին: Ի՞նչ քաջութիւն և վեհանձնութիւն ցոյց տուին այս հարուստ նիկողիմոս և Յովսէփ Արիմադայացին: Ո՞ւր էին անօթի աղֆատները, որոնք կերակրուած էին Յիսուսի Ձեռքով, ո՞ւր էին աղֆատ կոյրերն ու կաղերը, որոնց Յիսուս բժշկած էր:

Մի միայն այս երկու "հոգիով աղֆատներն" էին, որ իրենց հարստութիւնը վտանգեցին, որովհետեւ ճանչցած էին Ճշմարիտ հարստութիւնը՝ Յիսուս Բրիստոսը: Իրենց փորձառութեամբ ու կամքով ու ոչ փաստարկութեամբ դարձած էին *"հոգիով աղֆատ"*:

Ա՛յս է "հոգիով աղֆատութիւն"ը: Այս երկու հարուստները ոչ թէ ուրացան Յիսուսը պաշտպանելու համար իրենց կալուածներն ու դրամը, այլ՝ ուրացա՛ն հարստութեան ժխտական ուժը, որ կործանիչ է կողոպտիչ է և սպաննող: Ու նուիրուեցան, նման Յիսուսի, դրական հարստութեան որ սիրե՛լ է, կարեկցի՛լ է, տա՛լ է ու նաեւ սրուիլ: Ուստի.

***Ապրի՛ այս հարստութիւնը և հարուստը,
որ "հոգիով աղֆատ" է վասնզի
Աստուծոյ արժայութիւնը անորն է:***

**Սեպտ. 14, 1987
Թորոնթօ**

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՏՔ ԵՒ Ս Է Ր

Ա՛ն ունեք միայն, կեանքի ընթացքին, անսակարկ նուիրումը որպէս հարստութիւն, իր չարչարանքները, որպէս մասնակցութիւն իր Փրկչին և իր հոգեւոր գրականութիւնը, որպէս վկայութիւն իր Աստուծոյն: Միակ աղբատութիւնը որ կու տայ ճշմարիտ հարստութիւն, *կար/աւ/ո՛ր*: աղբատութիւնն է, ընդունուած աղբատութիւնը, ուրախութեամբ ընդունողներուն:

Հարստութիւնը երկրիս հրապարակը կանգնած է հրապուրիչ չաստուածուհիի մը նման: Մարդիկ զայն ունենալու համար, դժբախտօրէն կը գոհնեն ժամանակ, զօրութիւն և առողջութիւն առանց գիտնալու թէ որո՞ւ պիտի թողուն իրենց դիզած արծաթն ու ոսկին: Տէր Յիսուս Փրկիչ է կորուսեալին, նեցուկ սկարին, սփոփանք սգաւորին, Տէր ու պաշտպան որբին, բարեկամ լքեալին, օգնական անկեալին, յոյս յուսահատին, հովիւ մոլորեալին և սրբութիւն զԱստուած սիրողին:

Յիսուս ըսաւ. «Գանձեր մի՛ դիզէք ձեզի երկրի վրայ, ուր ցեցն ու ուտիճը կը փճացնեն և ուր գողերը ծակ բանալով կը գողնան»: Այս պատուէրին կեդրոնական բառը **“Մի դիզէք”** բարն է: Ընդհանրապէս մարդիկ կ’աշխատին իրենց կեանքին բոլոր օրերը դրամ դիզելու համար, ու երբեք ժամանակ չեն ունենար զանոնք վայելելու:

Պարսիկ Մոգերու պետը որ եկած էր հայերը վերադարձնել գրադաջտականութեան, ըսաւ.

«Թողէ՛ք որ գրե՛մ և ցոյց տա՛մ մե՛ծ թագաւորին թէ Հայաստանի մէջ կարելի չէ հաստատել մոգական կրօնը: Արուհե՛տե՛ք հայերը մարդիկ են, որոնք ո՛չ ջոյթաներէ կը վախնան, ո՛չ տանջանքներէ երկխոյ կը զգան և ոչ ալ հարստութիւնը բանի մը տեսլ կը սեպեն: Ո՞վ կրնայ այս մարդոց դիմադրել.»

Որքան ճապուհ թագաւոր ջանաց արգիլել Զրիստոնէութիւնը իր սահմաններուն մէջ, անոնք աւելի և աւելի աճեցան ու բազմացան և հասան մինչեւ Քուջաններու աշխարհը, ու այնտեղէն տարածուեցան դէպի հարաւ մինչեւ Հնդկաստան:

Հարստութիւնը պատիժ մըն է ինչպէս ստրկութիւնը:
Հարուստը կրնար ունենալ երկինքը, բայց ուզած է երկիրը: Կրնար
բնակիլ արհայութեան մէջ, բայց ընտրած է դժոխքը: Կրնար պահել
իր հոգին, սակայն փոխանակած է զայն նիւթին հետ, կրնար սիրել,
սակայն նախընտրած է ատել ոչ ոք կրնայ փրկել զայն: Հարս-
տութիւնը յաճախ վերջն է թշուառութեան մը, և **սկիզբը ուրի՛շ**
թշուառութեան:

Յիսուս ըսաւ. «Ձեր հարստութիւնը մի՛ դիզե՛ք երկրի վրայ, ուր
ցեցն ու ժանգը կը փճացնեն և կամ գողերը պատդ քանդելով ներս
կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցե՛ք
երկինքի մէջ»--Մատ. 2.19 «Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ր որ է,
հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

Ի՞նչ էր ժողովուրդներուն հարստութիւնը հազարաւոր դարերէ
ի վեր: Այիզբը՝ կալուածներ, ագարակներ հօտեր և արջառներ էին:
Յետոյ դարձաւ մետաղ՝ ոսկի արծաթ և պղինձ: Ժողովուրդները
անցեալին երբ գաղթէին, իրենց բոլոր ստացուածքը հետերնին կը
տանէին հօտերը, արջառները և վրանները: Ժամանակի ընթացքին,
մարդիկ իրենց հարստութիւնը փոխանակեցին ոսկիի, արծաթի և
պղինձ դրամի որպէսզի աւելի դիւրաւ կարենան կրել իրենց
ունեցածը: Զոր օրինակ "Անառակի" առակին մէջ փոքր եղբայրը
իրեն ինկած ժառանգութիւնը դրամի վերածելով քաղաք տարաւ և
անառակութեամբ ապրեցաւ:

Առաջին անգամ ըլլալով 1861-ին Միացեալ Նահանգներու
Մերակոյտը արտօնեց որ գանձային նախարարութիւնը **Թղթադրամ**
հրատարակէ: Թղթադրամի դիւրութիւնը դուռ բացաւ վճարագիրի
(check): Այս դիւրութեան պատճառաւ մարդիկ սկսան ճամբորդել
թէ՛ որպէս առեսրականներ և թէ՛ զբօսաշրջիկներ: Եթէ առե-
սրրականներ և զբօսաշրջիկներ պարտադրուէին ճամբորդել
մետաղադրամով կամ Թղթադրամով, կրնային կորսնցնել կամ
կողոպտուիլ ճամբու ընթացքին:

Իսկ այսօր, ամբողջ աշխարհ դարձած է մեծ խառնարան մը
ուր միլիոնաւորներ գանազան ազգերէ ու լեզուներէ կը ճամբորդեն
առանց Թղթադրամի և առանց վճարագիրի այլ բլատիզ փոքր
credit քարթով մը: Մոյն մոզական քարթով ոեւէ անձ կրնայ
աշխարհը դառնալ ուզած գնումը կատարել և փափաքած հաճոյքը
ըմբռնել ու վերադառնալ տուն:

Վերոյիշեալ բոլոր տեղեկութիւններու մասնանշելուս
իրողութիւնը ա՛յն է, որ այս աշխարհի որդիները ջատ աւելի կի-
ռարական (գործնական) են, զարգացնելու աշխարհի առեսուրն ու

գբօսաշրջիկութիւնը, միասնական գործակցութեամբ, քան թէ եկեղեցական հոգեւորականներ միասնական համագործունէութեամբ: Յիսուս Ի՛նք վկայած է աշխարհականներու նկատմամբ և ըսած է.

**„Այս աշխարհի որդիները իրենց սերունդին մէջ
աւելի իմաստուն են, քան լոյսի որդիները“** -- Դուկ, ԺԶ.Ճ:

Անշուշտ պիտի գտնուին բիչ կամ շատ նախանձախնդիր եկեղեցականներ ալ, որոնք պիտի Բննադատեն զիս: Մակայն ես երկիւղ չունիմ անոնցմէ, որովհետեւ ա՛յնքան անարգուած ու Բննադատուած եմ կեանքիս բոլոր՝ ջրջանին, որ ասկէ աւելի չեմ կրնար նախատուիլ և անարգուիլ:

Օրինակ, դարերէ ի վեր կը տօնակատարենք Յիսուս Փրկչին Սուրբ Ծննդեան Աստուածայայտնութիւնը, սակայն տարբեր օրեր: Ինչո՞ւ, որովհետեւ կը տօնենք ոչ թէ **Յիսուսի՝ Մարդեղութիւնը**, Մարմնացումը և Աստուածայայտնութիւնը, այլ՝ **Օ՛րը**: Մարդկութեան կարիքը "օր"ը չէ՛ երբեք, այլ դէ՛պք եղելութիւնը՝ *„Բանին մարմին եղեւ“* ըլլալը: Արդեօք ինչո՞ւ, ի սէր եկեղեցական միասնականութեան և համակամ խոնարհութեան չենք զոհեր մեր աւանդութիւնները ու փիլիսոփայական վարդապետութիւնները և եղբայրաբար չենք միանար իրարու, ցոյց տալու համար անհաւատ աշխարհին թէ բոլորս ալ կը սիրենք ու կը հաւատանք Յիսուսի՛ յայտնած Աստուած Ճշմարիտը:

Արդեօք ինչո՞ւ "եկեղեցական հայրեր" կոչուած եպիսկոպոսները կնճռոտած են Նազովրեցի Յիսուս Զարոզիչին սրբաբար խօսքերը, ստեղծելով նախապաշարումներ պարզ հաւատացեալներու մտքին մէջ, պարտադրելով իրենց հաւատակիցներուն, թէ Յիսուս Զրիստոս "միաբնակ" բնութեան տէր էր ու "միւսները"՝ Բիւզանդացիները (յոյները) "երկբնակ" Բրիստոնեաներ են: Միթէ մարդ արարածները, կրնայի՞ն Յիսուս Փրկիչը՝ իրենց Տէրը, տանիլ բնալուծարան, Բննել, և հաստատ ու վճռական եզրակացութեան գալ երկու հազար տարի առաջ: Ի՛նչ անիմաստ վճիռներ ու մարդկային ամբարտաւան, փառամոլ հաւակնութիւնները, որոնք Բայբայեցին և իրարմէ բաժնեցին եկեղեցիներու գլխաւորները ու դադրեցուցին Յիսուսի սուրբ և սիրոյ եկեղեցիին յառաջդիմութիւնը: Այսօր, երկհազարամեայ դարու մէջ, մեզմէ Բանինե՞ր հարց կու տան կամ կը հասկնան իմաստը "միաբնակ" և "երկբնակ" բառերուն...:

Այսօր, Հայ եկեղեցոյ մէջ, Բանի՞ հաւատացեալ կը հետաքրքրուի թէ այս կամ այն Բրիստոնեան "միաբնակ

հաւատացեալ մըն է, թէ՞ "երկբնակ": Աշխարհի դրամապաշտ և պատերազմասէր անձեր, որքա՞ն դրամափոխադրական դիւրութիւններ կ'ընծայեն հանրութեան, որպէսզի անոնց դրամը կորզեն, իսկ անոնքին քրիստոսի ծառայ կոչուածներ կ'ատեն զիրար և իրարու եկեղեցիներն իսկ չեն այցելեր: Մինչդեռ մեզի՝ Ի՛ր աջակերտներուն համար խաչեա՛լ Յիսուս Քրիստոս ըսաւ.

«Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրե՛ք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցե՛ք զիրար: Եթէ՛ դուք զիրար սիրե՛ք՝ ատով ամէներ ցիտի գիտնան թէ՛ դուք իմ աջակերտներս էք» --Յով. ԺԳ.34-35:

325 թուականին Բոնսթանթին թագաւորը ի մի հաւաքեց աշխարհի բոլոր եպիսկոպոսները (317 հատ) Նիկիոյ համեստ Բաղաբը, որպէսզի եկեղեցական "Հայրեր" կոչեցեալները, միասնակա՛ն, Հաւատոյ Հանգանակ մը ձեւաւորե և կազմաւորե որպէսզի բոլոր եկեղեցիները ունենան մէ՛կ հաւատքի հանգանակ ու մէ՛կ վկայութիւն: Այս համեստ գիւղին մէջ շարադրուեցաւ այժմու Պատմական եկեղեցիներու Նիկիական "Հաւատոյ Հանգանակ"ն որ կը կարդացուի ամէն Կիրակի օր:

Երբ Արեւմտեան, Լատին եկեղեցւոյ կրօնաւոր պատգամաւորները կը վերադառնային Հոռոմ, իրենց հաշտ երեւցաւ աւելցնել նաեւ «Եւ Որդւոյն» երկու բառերը սոյն "Հաւատոյ Հանգանակ"ին մէջ ընթերցման ժամանակ ո՛չ գրաւոր կերպով: Լատին (Արեւմտեան) եկեղեցւոյ սոյն յաւելուած "Եւ Որդւոյն" երկու բառերը Արեւելեան եկեղեցիներուն անհաճոյ թուելուն պատճառաւ, Արեւելեան և Արեւմտեան եկեղեցիները բաժնուեցան իրարմէ: Միթէ այդ բաժանումը օրէնսդրութեա՞ն համար տեղի ունեցաւ, թէ, որովհետեւ եկեղեցւոյ "Հայրերը" սէր չունեցան իրարու հանդէպ:

Քրիստոնէաներ ի՞նչ իջխանութեամբ կ'ուզեն կանոնագրել կամ սահմանել զԱստուած և Սուրբ Հոգին: Յիսուս Քրիստոս Ի՛նք ըսած է.

«Ոչ ոք կը ճանչնայ Որդին, եթէ ոչ՝ Հայրը. և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդին, և ան՝ որու ն ուզէ յայտնել Որդին»--Մատ. ԺԱ.27:

Յիսուս, Տէրն ու Գլուխը եկեղեցւոյ երբ կ'ազդարարէ Իր աջակերտներուն որպէսզի ճանչնա՛ն իրենց չափն ու սահմանը,

Եկեղեցին ի՞նչ իշխանութեամբ իրեն նման չխորհող տարբեր եկեղեցի մը կը նզովէ Սբ Խորանէն, իւրաքանչիւր անգամ որ Հաւատոյ Հանգանակը կը կարդացուի: Միթէ այս նզովքը ոտնձգութիւն մը չէ՞, պարտադրութիւն մը չէ՞ դատող եկեղեցիի մը կողմէ: Մինչ Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն. **«Մի՛ դատէ՛ք»:**

Յիսուս եկաւ աշխարհ ո՛չ թէ շարունակելու Մովսէսի գրաւոր Օրէնքը, այլ՝ փոխանցելու Աստուծոյ *ընտրին ու ողորմութիւնը* մարդ արարածներուն: Յիսուս մարդացաւ ու եղաւ կենդանի՝ և ապրող աստուածայայտնութիւն, սիրո՛յ, ողորմութեան ու բաղքութեան Ակնադրբիւրը: Ան չեկաւ պարտադրելու Մովսէսի գրաւոր և բարեղէն "Հաւատոյ Հանգանակ"ը, այլ յայտնեց Աստուծոյ սէրը ըսելով.

«Օրէնքն ու մարգարէները մինչեւ Յովհաննէ՛ս գոյութիւն ունէին. անկէ՛ յետոյ կը փարոզուի Աստուծոյ արքայութիւնը»--Ղուկ. ԺԶ.16:

«Անոյ, և որ ձեխտի մը մասին խօսելով՝ այլեւս հինգամ՝ կը նկատէ առաջինը. իսկ ինչ որ հինգամ է ու ժամանակավրէպ կ'անհետանայ»--Եբր. 8.13, կ'ըսէ Թուրթ Եբրայեցիներուն հեղինակը:

Յիսուս, Աստուծոյ Արքայութեան մտնել ուզողներուն, միայն մէկ տեսակ դեղ մը **aspirin** չհրամցուց, կարգ մը ներկայ բժիշկներու նման: Ան ընծայեց զանազան դեղեր իւրաքանչիւր հոգեկան հիւանդին:

1. Փարիսեցի Նիկողեմնոս վարդապետին, Յիսուս ըսաւ.

*«Ճշմարիտ, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը՝ **վերստին չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը տեսնել»** --Յով. Գ.16:* Նիկողեմնոս Հրեայ ռաբբի մըն էր: Ան ուսած ու թրծուած (հնոցէ անցնելով) պնդացած ու **նախապաշարուած** Փարիսեցի մըն էր: Այսպիսի անձ մը կարիքը ունէր վերստին ծնանելու, իր նախապաշարումներէն ազատուելու համար, որպէսզի նոր հոգիով ու մաքուր միտքով կարենայ ըմբռնել Տէր Յիսուսի երկնապարգեւ Աստուծոյ յայտնութիւնը:

Այսօր ալ կան բազմաթիւ քրիստոնեայ փարիսեցիներ, որոնք փարացուցեր են Յիսուսի փարոզ պատգամները մէկ դեղահատի մէջ, որ իրենց համար *«Եւն վերստին ծնած ետ»* aspirin-ով: Այս փարիսեցիները կը մոռնան, որ Բժիշկ Յիսուս, այս դեղահատը տուաւ մի միայն Նիկողեմնոս ռաբբի վարդապետին: Ան ոեւէ ուրիշի չէ ըսած երբեք. *«Ոչեմ է քեզի վերստին ծնանիլ»*.

Աստուած-Որդի Յիսուս, Իր մարդեղացումով ջանաց ճանչնալ մարդ արարածը և օգնել ու դիւրացնել անոր դարձը դէպի Երկնաւոր Տուն՝ ծոցը Հօր Աստուծոյ: Այնպէս ինչպէս աշխարհի հօգօրներն ու դրամատերերը դիւրացուցած են դրամական փոխանակութիւնը, որպէսզի մարդիկ ճամբորդեն և իրենք ալ շահագործեն զանոնք և հարստանան: Աստուածաբար Յիսուս եւս եկաւ աշխարհ դիւրացնելու և պարզաբանելու ճամբան դէպի Երկնաւոր արքայութիւն, ցոյց տալով Իր կեանքը, ծառայութիւնը և անձնագոհութիւնը: Ան Եսայի մարգարէի ձեռքով խօսեցաւ, Մովսէս մարգարէէն 800 տարիներ յետոյ, ըսելով.

*«Ես անոր պիտի նայիմ, այսինքն խոնարհին և կուտրած հոգի ու նեցողին ու իմ խօսմէս դողացողին:
Արջառ մողթողը, մարդ մեռցնողի պէս է, գառնուկ գոհողը ջուն մողթողի պէս, նուէր մատուցանողը խոզի արիւն մատուցանողի պէս, կնոքուկ ծխողը կռուք պաշտողի պէս
--Եսայ, ԿԶ.2-3:*

Մեզ սիրող և մեզի համար Իր կեանքը գոհող Յիսուս Բրիստոս նաեւ ըսած է.

«Եթէ դուք գիրաք սիրէ՛ք՝ ասով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք»--Յով. ԺԳ.35:

Յիսուս եւս Իր մարդեղացումով, դիւրացուցած է մարդոց անցքը դէպի յաւիտենական կեանք, հաւատքով ու զԱստուած սիրելով, ու ո՛չ կենդանիներու և արջառներու կամ մարդկային գոհագործումներով:

2. Ի՞նչ կը կարծուի ըլլալ մեծ Պատուիրանը: Այս պատուիրանին մէջ, Յիսուսի դեղահատը՝ զԱստուած սիրել է, տեսնենք.

Եւ ահա օրինականներէն մէկը ոտքի ելաւ. կը փորձէր Յիսուսը ու կ'ըսէր. «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ որ յաւիտենական կեանքը ծառանգեմ»: Եւ ան ըսաւ անոր. «Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է, ինչպէ՞ս կը կարդաս»: Ան պատասխանեց ու ըսաւ.

***«Պիտի սիրես Ըն Տէր Աստուածդ Բու
ամբողջ սրտովդ և Բու ամբողջ հոգիովդ
և Բու ամբողջ զօրութեամբդ Բու ամբողջ մտքովդ.
և պիտի սիրես Բու ընկերդ՝ Բու անձիդ պէս»:***

Եւ Յիսուս ըսաւ անոր. *«Ճիշդ պատասխան տուիր, **ըրէ՛ աօհկա և պիտի փրկուիս**»*--Ղուկ. Ժ.25-28:

Աստուածայայտնիչ Յիսուս, համբօրէն ու դանդաղօրէն առաջ-նորդեց մարդ արարածը աստուածածանաչումի, ու խտացուց աստուածահաճոյ պատուիրանը *սիրո՛յ գործադրութեամբ*: Միրո՛յ այս դեղահատին իրագործումը կը տեսնենք գերեզմանը յաղթահարող Յարուցեալին և Պետրոս աշակերտին գաղտնի ու միայնակ խօսակցութեան մը ընթացքին:

Մահուան կապանքները փշրող Յարուցեալ Բրիստոս, Ձինք ուրացող աշակերտ Պետրոսը մեկդի կը կանչէ ու մտերմօրէն քաղցրաշունչ ձայնով կը հարցնէ անոր առանց անոր արժանա-պատուութիւնը կոտրելու: Յիսուսի քաղցրաբոյր հարցումը կը կրկնուի երեք անգամներ: Մեծ վարդապետին հարցումը՝ Անոր գերագո՛յն դեղահատն է, որ դարեր ջարունակ կը կրկնուի Բեզի և ինձի.

***«Միմո՛ն Յովնանի,
կը սիրե՞ս զիս աւելի քան ատոնք»:***

Յիսուս Բրիստոսի այս վերջին դեղահատ հարցումը՝ «Կը սիրե՞ս Ձիս»ը, աշխարհի հզօր մարդոց ընծայած *credit card*-ն է, որով բոլոր դրոները կը բացուին և անկարելի կարծուածները, կարելի կը դառնան սիրելով Աստուած:

16 դարեր ջարունակ եկեղեցականներ ու հաւատացեալներ կ'աղօթեն ու կը կրկնեն Նիկիոյ "Հաւատոյ Հանգանակ"ը թուրքա-բար, առանց սիրոյ և հոգիի: Ինչո՞ւ, որովհետեւ այդ "Հաւատոյ Հանգանակ"-ին մէջ, *մէ՛կ հատիկ միրոյ բառ մ'իսկ չկայ*: Հոն ուր սէր չկայ՝ հաւա՛տք ալ չկայ: Հոն ուր սէր չկայ՝ միասնականութի՛ւն ալ չկայ: Հոն ուր սէր չկայ՝ կեա՛նք ալ չկայ: Հոն ուր սէր չկայ՝ Յիսուս ալ չկայ:

Բարաջէն ու մարմարաջէն գեղեցիկ ճարտարապետական եկեղեցիներ ունինք, որոնց մէջ Յիսուս Բրիստոս միայն գունաւոր պատկերով մը կը ներկայանայ ներկաներուն: Իրականն ու կենդանի Յիսուս քնացած է արդի եկեղեցիներէն ներս: Աշխարհ կը գահավիժի դէպի այլասերում, անհաւատութիւն, սեռայնութիւն, դրամապաշտութիւն և խենեջութիւն, իսկ հաւատացեալ ենք ըսողներ բարած են գրաւոր կամ քարակերտ "Հաւատոյ Հանգանակներու"-ն որոնց իւրաքանչիւրը մարդակերտ կրթողներ դարձած են անհոգի ու լուռ, որոնք ցոյց կու տան անցեալի մարդահաճոյ պատրանքներն ու իրենց փառամոլութիւնները:

Արդեօք փափկանկատութի՞ւնն և քաղաքավարութի՞ւնն նկատելու, և լո՛ւռն անցնելու ենք մեր Առաքելական կրկնակ կաթողիկոսական աթոռներուն համար: Միթէ վեց դարերու թաւալումը բաւարար չէ՞, որ Հայ Առաքելական Եկեղեցիները արթննան և ապաշխարանքի ու զղջումի հոգիով միանան ու քազմեցնեն հեկեկացող Լուսաւորչի կանթեղը, մէ՛կ խորանի ու անբաժա՛ն սուրբ աթոռին վրայ: Երկհազարամեան պիտի՛ անցնի ուզե՛նք թէ չուզե՛նք, բայց անկէ յետոյ պիտի գայ Աստուծոյ դատաստանը: Երանի՛ թէ մեր մէջ "Հա՛յր" կոչուողները հաւատայի՛ն գալիք Մեծ Դատաստանին:

Ներկայ աշխարհը Յովնան մարգարէներու պէտքը ունի, որոնց ապաշխարութեան զանգահարումը պիտի արթնցնե՞ կրօնքի և հաւատքի առաջնորդները: Անո՛նց բուրձով ու մոխիրով խոստովանութիւնն ու զղջումը դերեւս ազատէ մարդկութիւնը Սողոմի ու Գոմորի ճակատագրէն:

«Դո՛ւք (Եկեղեցին) է երկրի աղը. սակայն եթէ աղը անհամնայ, ինչո՞վ պիտի աղուի. անկէ վերջ ոչ մէկ բանի ծառայելով դուքս պիտի նետուի, ըլլալով ոտքի կոխան մարդոց:

Դո՛ւք (Եկեղեցին) է աշխարհի լոյսը. քաղաք մը որ կանգնած է լեռան վրայ, չի կրնար ծածկուիլ: Եւ ճրագը վառելով գրուանի տակ չեն դնէր, այլ՝ աջտանակի վրայ, որ լոյս տայ բոլոր անոնց՝ որոնք տան մէջ կը գտնուին: Այդպէ՛ս թող փայլի ձեր լոյսը մարդոց առջեւ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքն է»--**Յիսուս Նազովրեցի**:

Յունուար 6, 2001

Թորոնթօ

“ՉԷՔ ԿՐՆԱՐ ԾԱՌԱՅԵԼ ԹԷ՛ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԹԷ՛ ՄԱՍՈՆԱՅԻՆ”

--Ղուկ. ԺԶ.13:

Այս համարին հարազատ թարգմանութիւնը և իմաստը հետեւեալն է. *«Չէ՛ք կրնար ծառայել թէ՛ Աստուծոյ և **պաշտել հարստութիւնը**: Յիսուս երբ կը խօսէր վերոյիշեալ խօսքերը, իր շուրջ հաւաքուած էին կեղծաւորները, դպիրները և իրենք զիրենք կղերական կոչած փարիսեցիները, որոնք կը պախարակէին Յիսուսը, բանի որ արծաթասէր էին: Եւ Ան, Յիսուս ըսաւ անոնց.*

«Գո՛ւ՛՛ք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տա՛ք, սակայն Աստուած գիտէ ձեր սիրտերը»:

Ղուկ. : ԺԶ. 15

Աստուած, մարդ արարածը այնպէս մը ծրագրած է, որ մարդ որո՞ւ որ հաւատայ և սիրէ, անոր կը **ծառայէ**, այսինքն՝ կը նուիրէ ինքզինքը:

«Ով որ ուզէ Ինձի ծառայել՝ պէ՛տք է Ինձի հետեւի, և Ինձի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր Ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ Ինձի ծառայողը»

--ըսաւ Յիսուս Բրիտանոս:

Մայր Թերեզայի կեանքը օրինակ: Ան ծառայեց և իր գործը՝ համախմբման արանցքը դարձաւ: Աստուծոյ ուզածը, ո՛չ թէ մեր աջխարհէ բաժնուիլն է, այլ Անոր ծառայե՛լն է նման Աննա մարգարէուհիի--Ղուկ. Բ.25-38:

Բոլոր այն մարդիկը, որոնք ծառայած են մարդկութեան, սպասաւորած են Աստուծոյ: Ծառայութիւնը երջանկութեան գաղտնիքներէն մէկն է, կարելի չէ երեսակայել մայր մը որ ծառայած է իր ընտանիքին ու երջանիկ չէ եղած: Ճորճ Ուաշինկթըն Գարվորի Տապանաբարին վրայ գրուած է.

«Կրնար ըլլալ մեծահարուստ ու համբաւաւոր, սակայն չփնտոնեց փառք: Ան գտաւ երջանկութիւն և գոհացում ծառայելով և օգնելով համայն մարդկութեան»:

Անկեղծ հաւատացեալի մը աղօթք խոստովանութիւնը առ Յիսուս. *«Ինչ որ երկրի աղին նմանցուցիր աջակերտներդ, որոնք կը*

*ձգտին Քեզի հետևել: Ի՞նչ վեճ յատկութիւն ու պաշտօն:
Հրախրեցիր զանոնք ամբողջ աշխարհը համեմելու: Բայց աւա՜ղ,
այսօր օրինազանց հաստացեալներ, մանաւանդ ես ինքս, ո՛րքան կը
դառնամ անհա՛մ, ոտներու տակ կոխկոտուելու արժանի...»*

Մարդկութիւնը կը տառապի այսօր, պարզապէս, որովհետեւ
չ՝ուզեր ցոյց տալ ծառայատիրութեան և խոնարհութեան ոգին իր
մէկ նմանին: *«Անտուծոյ և Հօր առջեւ սուրբ և անարատ
կրօնաւորութիւնը այս է, այցելել սուրբերու և և այրիներու և՛ իրենց
նեղութեան մէջ, անարատ պահել իր անձը աշխարհէն»* -- Յակ. Ա. 27:

Մարդ իր մեծագոյն կորուստը կը կրէ երբ իր մէջ կը մահանայ
ապրելու տենչը, պայքարելու կամքը և ծառայելու պատրաստա-
կամութիւնը:

Եկեղեցի մը պէտք է դուրս գտնուողները ներս հրապուրէ,
ներսը գտնուողներուն օգնէ՞ որ զԱստուած պաշտեն
ճշմարտութեամբ և հոգիով և դուրս արձակէ զանոնք ծառայելու
մարդկութեան: Երրորդ դարու սուրբերէն՝ Բարսէղ Վեսարացին
ըսած է. *«Մերկեցուք մեզ, ո՛վ Տէր, տեսնել և օգտագործել ծառայու-
թեան ամէն պատեհութիւն: Թո՛ղ ըլլանք տուողներ՝ առանց
փոխարժէքի հաշուելու, պայքարողներ՝ առանց վիրաւորելու,
աշխատողներ՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայողներ՝ առանց
վարձատրութիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ թէ Զու կամքդ է
որ կը կատարենք: Ամէն»:*

Յիսուսի աշակերտները ճանչցան իրենց Վարդապետը մի
միայն Անոր ծառայութեան, խաչելութեան ու Յարութեան ընդմէջէն:
"Պատարագ" բառը կը նշանակէ "նուէր, ընծայ": Աելի ուշ այդ բառը
սկսաւ գործածուիլ "ծառայութեան" համար: Ծառայութեան
ամենամեծ օրինակը Քրիստոսի մարդեղութիւնն էր: Ան իր

«Անձր ու նայնացուց՝ ծառայի կերպարանք՝ առնելով»:

ԺԸ. դարուն Միմէն Ա. կաթողիկոս, ինչպէս նաեւ Պոլսոյ
երկու հայ Պատրիարքներ՝ Կոլոտ և Նալեան, իրենց մշակութային
գործով ճամբայ հարթեցին հայկական զարթօնին: Յովհաննէս
Կոլոտ և ընկերը Գրիգոր գիտութեան ծարաւի երկու երիտասարդ-
ներ, մտքի ու սրտի ընտիր պաշարով օժտուած: Կոլոտ 1715-ին
բազմեցաւ Կ. Պոլսոյ պատրիարքական Աթոռը, և Գրիգորը ընտրել
տալով պատրիարք Ա. Երուսաղէմի: Կոլոտ շատ մը աստուածա-
բանական մեծահատոր գործեր երոպական լեզուներէ հայերէնի
թարգմանել տուաւ Խարբերոյցի Ղուկաս վարդապետ Աբրահամեանի

ձեռքով, դպրատան մատենադարանին համար, իսկ *դրամը հոգաց իր
բնակչին*։ Պոլսոյ Հայութիւնը կերպարանափոխ եղաւ իր օրով,
դրական շարժում մը տիրեց հոն, որ Կոլոտի մահէն ետքն ալ
շարունակեց:

Յիսուս հարստանալը չէ որ կ'արգիլէ, ոչ ալ տնտեսա-
գիտութիւնը, հապա լոկ կը զգուշացնէ անոր *ժառաջ* ըլլալը:
Մամոնայի ծառայել կ'ենթադրէ նիւթապաշտ ըլլալ: Պօղոս առաք-
եալ իր անտարանի քարոզութեամբ և բազմաթիւ ճամբորդութեան
փորձառութեամբ նկատեց ու տեսաւ շատ մը հարուստներ: Ան իր
եզրակացութիւնը կը պատմէ Տիմոթէոսին ու կ'ըսէ.

«Անոնք որ կ'ուզեն հարստանալ՝ կ'իյնան փորձութեան,
որոգայթի և շատ մը անմիտ ու վնասակար ցանկութիւններու մէջ»:
Որովհետեւ բոլոր չարիքներուն արմատը արծաթասիրութիւնն է--Ա.
Տիմ. 2:9-10: "Յոյս չդնեն սնտոյի հարստութեան վրայ, այլ Աստուծոյ
վրայ, որ առատօրէն ամէն ինչ կու տայ"--Ա. Տիմ. 2:17: «Ճատեր
դրամ դիզելու ձգտելով՝ հաւատքէն ջեղեցան և իրենք զիրենք
տանջեցին բազմաթիւ ցաւերով»--Ա. Տիմոթ. 2:10:

Այսօր աշխարհի մեծ պետութիւններ կը հպարտանան ոչ թէ
իրենց դիզած հարստութեամբ այլ իրենց ունեցած արուեստի
գործերով: Ֆրանսա՝ իր Լուվրով և Ազգային մատենադարանով,
Ռուսիա՝ իր Էրմիթաժ թանգարանով, Բրիտանիա՝ իր Պրիթիջ
Միւզիւմով, Գերմանիա՝ Միւնիխի Փինսթրէթով, Իտալիա՝ Ֆլորանսի
Ուֆիշիւմով: Իսկ Եկեղեցիներ ու յարանուանութիւններ իրենց
ինչնօ՞վը կը հպարտանան որպէսզի ուրախացնեն զԱստուած: Հին
Հռոմը կեդրոնն էր աշխարհի հարստութեան, բայց և գեղիւթեան՝
մտքի և կեանքի այլասերման: Այսօր, մարդիկ յանձնուած են
հարստութեան մարմաջին և փառասիրութիւններուն, սակայն
հարստութեան մէջ գոյութիւն չունի ընտանիքի, ազգի, և Աստուծոյ
սէրը: Սոյն առաքինութիւններն ու վսեմ զգացումները հոգեկա՛ն
են ու ոչ նիւթական: *Աշխարհիս մեծութեան և հարստութեան
սահմանը գերեզմանն է:*

Հարստութիւնը երկրիս հրապարակը կանգնած է հրապուրիչ
չաստուածի մը նման: Մարդիկ զայն ունենալու համար կը զոհեն
ժամանակ, զօրութիւն, և արողջութիւն. դժբախտօրէն, արանց
գիտնալու, թէ որո՞ւ պիտի թողուն իրենց դիզած արծաթն ու ոսկին:
Մինչ, Տէր Յիսուս Փրկիչ է կորուսեալին, նեցուկ՝ տկարին,
սփոփանք՝ սգաւորին, Տէր ու պաշտպան՝ որբին, բարեկամ՝ լքեալին,
օգնական՝ անկեալին, յոյս՝ յուսահատին, հովիւ՝ մոլորեալին, և
սրբութիւն՝ հաւատացեալին: Հաւատացեալը զգաստ ու արթուն

հսկելու է, որ կործանարար արծաթասիրութիւնը մուտք չգտնէ իր սրտէն ներս: Պետրոս առաքեալ կը յիշեցնէ հաւատացեալները ըսելով. «Աղթո՛ւն կեցե՛ք, հսկեցե՛ք, քանի որ ձեր ոտիդ՝ Աստանան, կը մտնէ առիւծի մը նման, կը շրջի և կլլելու համար մէկը կը փնտռէ»--Ա. Պետ. Ե.8:

Հարուստը կրնար ունենալ երկինքը, բայց ուզած է երկիրը: Կրնար բնակիլ արքայութեան մէջ, բայց ընտրած է դժոխքը: Կրնար պահել իր հոգին, սակայն փոխանակած է զայն նիւթին հետ, կրնար սիրել, սակայն նախընտրած է ստել, ոչ ոք կրնայ փրկել զայն այլեւս: «Ձեր հարստութիւնը մի՛ դիզե՛ք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փճացնեն և կամ գողերը պատդ քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցե՛ք երկինքի մէջ»--Մատ. 2.18: «Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ւր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

«Մեզմէ առաջ ու մեզի հետ ճամբայ ելած շատ մը հզօր ազգեր և կայսրութիւններ թաղուեցան ու մնացին պատմութեան էջերուն մէջ, մինչ մենք շարունակեցինք ապրիլ ու գոյատեւել իբրեւ ազգ, որովհետեւ մեր նախահայերն ու մեր պապերը գիտցան զանազանութիւն դնել մնայուն ու գնայուն արժէքներուն և յաւիտենական հարստութիւններուն միջեւ»--**Գրիգոր Նգրուբեան:**

Օգոստոս 18, 2000

Թորոնթօ

ՉԵՍ ՈՒՋԵՐ ԳԻՏՆԱԼ ՈՒՐԻՉ ԲԱՆ ՄԻԱՅՆ ԽԱՉԵՑԵԱԼ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

--Ա Կորն. Բ.2

Ինչո՞ւ Պօղոս առաքեալ չ'ուզեր գիտնալ ուրիշ բան, այլ միայն Յիսուս Բրիստոսի տառապանքն ու սրբարար խաչելութիւնը Կորնթոսի հաւատացեալներուն մէջ: Պօղոս առաքեալի Կորնթացիներու ըսած վճռական խօսքերուն բանալին կը գտնուի, նոյն գլխուն 5-րդ համարին մէջ, ուր ան համեստօրէն կ'ըսէ.

*«Տրպէսզի ձեր հաւատքը չըլլայ մարդոց
իմաստութեամբ, այլ՝ Աստուծոյ զօրութեամբ»:*

Պօղոս առաքեալ "իմաստութիւն" և "գիտութիւն" ճանչցուած բառերը չուրանար, այլ առաքեալին խօսքերը կ'ակնարկէն "մարդկայի՛ն" իմաստութեան (Պղատոսի և Արիստոտելի): Որովհետեւ ինչպէս կան մարդկային տրամաբանութիւն և բանականութիւն, կա՛յ նաեւ երկնային **յայտնութիւն**: Անչափահասներու տրամաբանութիւնը, որ առաջնորդեց "Անառակ Որդին" դէպի թշուառութեան ոլորապտոյտը: Կա՛յ նաեւ չափահասներու՝ անոր հօ՛ր մտածումները, որոնք երկնայա՛յտ են, Աստուծոյ օժանդակութեամբ:

Ի՞նչ է մարդկային իմաստութիւնը: Մարդկային իմաստութիւնը կ'առաջնորդուի տրամաբանութեամբ, բանականութեամբ ու նաեւ, դժբախտաբար, նախապաշարումով և մարմնական մղումներով: Նախապաշարումը առանց Բնութեան, ընդունուած և հեթանոս աւանդութիւններէ սերած պատրաստ կարծիքներ են, սիրուած համա՛յն մարդկութեան մէջ: Յիսուս Բաջ գիտնալով մարդոց հեթանոսական նախապաշարումը ըսաւ Ձինք մտիկ ընող բազմութեան.

*«Մարմնին ճրագը աչքն է. երբ աչքը առողջ է՝
անբողջ մարմինը լուսաւոր կ'ըլլայ. իսկ երբ աչքը
չար է՝ (նախապաշարեալ), մարմինն ալ խաւար
կ'ըլլայ»-- Դուկ. ԺԱ.34:*

Մարդ արարած, վերոյիջեալ երեք (տրամաբանութիւն, բանականութիւն և նախապաշարում) յատկութիւններուն վրայ, յաւելեալ ըլլալով, կրնայ ստանալ նաեւ **աստուածային յայտնութիւն**: Աստուածային յայտնութիւն ունենալու համար, մարդ ապրած ըլլալու է Աստուածահաճոյ կեանք մը:

Աստուածայայտնութիւնը, **քնարովի** է: Այսինքն, այդ զօրութիւնը չի նմանիր արեւի ճառագայթներուն որոնք կը տարածուին համայն աշխարհի վրայ, այլ վերոյիջեալ յայտնութիւնը Աստուծմէ յաւելեալ նուէր մը, պարգեւ մըն է որ կը տրուի զԱստուած սիրողներուն և Անոր պատուիրանները անձնագոհաբար կատարողներուն: Մոյն պատճառաւ, Յովհաննէս առաքեալ մեջքերումը կ'ընէ Յիսուսի խօսքերը, ըսելով.

«Հոգին է կենդանարար: մարմինը ոչ մէկ բանի կ'օգնէ: Այն խօսքը զոր էս ըսի ձեզի՝ հոգի է և կեանք: Բայց ձեր մէջ կան ոմանք, որ չեն հաւատար: Եւ քանի որ Յիսուս սկիզբէն գիտէր թէ որոնք են անոնք որ չեն հաւատար, և թէ ով է ան որ պիտի մատնէ Ձիւնք, ըսաւ. «Անոր համար ըսի ձեզի թէ ոչ ոք կրնայ գալ Ինձի, եթէ ասիկա Հօրմէս տրուած չէ անոր»:--Ձ.64-66

Յիսուսի վերոյիջեալ խօսքերուն համար, Պօղոս առաքեալը եւս կ'ըսէ.

«Ես միտքս չեմ դրած ձեր մէջ գիտնալ ուրիշ բան՝ քան միայն Յիսուս Ըրիստոսը և նոյն ինքն իրաչուածը»:

Մարդ արարած կը խրոչի և կը խուսափի ցաւէ ու տառապանքէ: Յիսուսի միտքը ու Անոր ճշմարտութիւնները կը ճանչցուի՞ն մի միայն Յիսուսի սրբարար Խաչելութեամբ, ցաւի՛ և տառապանքի բանալիով: Ինչո՞ւ: Որովհետեւ, Ան իջնելով երկինքէն երկիր ցոյց տուաւ մարդոց, թէ Աստուած փրտութեամբ չգործեր, այլ սիրով: Միրելու և սիրուելու միակ միջոցը, այսինքն պայքարի գործիքը, *անձ նագոհութիւնն և անձ նուիրումն է:* Անառակ Որդիին առակին մէջ, հայրը իր ունեցած ստացուածքին կէսը տուաւ իր պզտիկ որդւոյն և անոր տունէն հեռանալու պահուն, փոխանակ, անիծելու զայն, արցունքոտ աչքերով հրաւիրեց զայն վերադառնալ իր հօրենական տունը:

Հայ ազգն ալ տառապեցաւ և բազմաթիւ անգամներ իրաչուեցաւ: Մեր աշխարհական պատմաբաններն ու եկեղեցական կրօնաւորները ինչպէ՞ս կը բացատրեն սոյն դէպքը ներկայ սերունդներուն: Մեր դաստիարակներն ու եկեղեցիները կը սորվեցնեն սիրե՞լ թէ ատել թշնամին՝ թուրքը: Թուրքը կրնայ ըլլալ անխիղճ, վայրագ ու գազանային: Իսկ մեր մտաւորականները

կրթեցին մեզ ըսելով. *«Ո՛ւր էր Աստուած Մեծ Եղեռնին»*:
Հայկական Մեծ Եղեռնին, Աստուած լացա՛ւ Իր չարչարուող
հաւատացեալներուն համար, այնպէ՛ս, ինչպէս լացած էր Իր Միածին
Որդւոյն Յիսուսի Խաչելութեան:

Երկրորդ, մեզմէ Բանի՞ անկեղծ ու ճշմարիտ անձեր
ուսումնասիրած են, թէ ինչո՞ւ համար Անի մայրաքաղաքին մէջ
հազար ու մէկ եկեղեցիներ կառուցուած էին: "Անին շտեմարանն էր
հայ հին դարերու ոճին և բանալին՝ իրմէ առաջ կորած գիտութեան
ու պատմութեան առեղծուածը լուծելու" համար--Կ՛ըսէ Թ. Թորա-
մանեան: Ինչո՞ւ համար երբեք չէ յիշուած հայ մեծահարուստ-
ներու անհաւատութիւնը և կրօնաւորներու նիւթապաշտութիւնը:
Կարդանք. (Հայկ. Հանրագիտարան էջ 408).

*«Մեծատուները փարթաժացել էին տնտեսների բր-
տիներով, վաճիւներով ու անիրաւութիւններով, անո-
ղորմ էին աղքատների հանդէպ, հակուած էին մեղկ
(իգացող) կեանքի, չէին խորշում կեղտոտ գործերից»:*

Հայ պատմաբան Մատթէոս Ուլիսայեցի կը գրէ այն վիթխարի և
հսկայ հարստութեան և հողերուն մասին, որոնք կը պատկանէին
կղերականներու: Պետրոս Կաթողիկոս (1019-1059) թուականին
ուսեցած է 500 գիւղ և ուրիշ հարստութիւններ որպէս անշարժ
կալուած և անձնական ստացուածք, որոնք ժառանգ ձգուած էին
իրեն հայ թագաւորներէն և հարուստներէն: Նաեւ կը պատմուի իր
մասին, թէ սիրահար էր դրամի և հարստութեան և ճոխութեան:

Անտակ Որդին երբ սնանկացաւ և պարտաւորուեցաւ դառնալ
խոզարած, այդ Աստուծոյ պատիժը չէ՛ր, այլ իր հեռանա՛լը
հօրենական տունէն՝ Աստուծմէ: Իսկ անոր ինքզինքին գալը, կը
նշանակէ ապաշխարութիւն: Պօղոս առաքեալ եւս միացնելով իր
ձայնը հաւաքակա՛ն առաքեալներու, կ՛ըսէ. «Ես միտքս չեմ դրած
ձեր մէջ գիտնալ ուրիշ բան՝ քան միայն Յիսուս Զրիստոսը և նոյն
ինքն Խաչուածը»:

Յիսուս Փրկիչ խաչուելով մե՛ր տեղը, ցոյց կու տայ մեզի, որ
մե՛նք եւս սնանկացած ու Աստուծմէ հեռանալով դարձած ենք
խոզարածներ (հոգ չէ թէ ձեռնադրեալ կամ աշխարհական
մկրտուած հաւատացեալներ): Մենք ալ դիտելով Խաչեալ Յիսուսը,
ուրանալո՛ւ ենք աշխարհը իր բոլոր հեշտանքներով: Նման Պօղոսի
նայելո՛ւ ենք միայն խաչեցեալ Յիսուսի, ու սիրո՛ւ անձնագոհելու
ենք մենք զմեզ, ու մեր հեշտալի ցանկութիւնները, որո՛ւ միայն

կարելի է հետեւիլ և առաջնորդել ուրիշները դեպի Յիսուս Բրիստոսի:

Համայն աշխարհի Բրիստոնեայ հաւատացեալները կը պարծենան խաչեցեալ Յիսուս Բրիստոսի սրբարար Խաչով այնպէ՛ս ինչպէս Պօղոս առաքեալ կը պարծենար: Մակայն ներկայ հաւատացեալներու և առաքեալներու պարծանքին միջեւ կան անչափելի հեռաւորութիւն և դիրքաւորումներ: Առաքեալները, իրենց Տէրն ու Փրկիչ Յիսուսի սրբարար Խաչը չէին կախած իրենց կուրծքին վրայ: Առաքեալները, Մարդեղացեալ Յիսուսի Խաչը, չէին կանգնած Բարաշէն եկեղեցիներու աշտարակներու վրան, որպէս ճարտարապետական պարծանք: Յիսուս Բրիստոսը մահացնող խաչը, կերտուած չէր ադամանդակուռ ոսկիով կամ փլաթիւնով, այլ կոշտ և անտաշ փայտէ:

Առաքեալները, երբ կը Բարոզէին իրենց Վարդապետին Աւետարանը, իրենց ձեռներուն մէջ չէին կրեր ոսկեղէն կամ արծաթեղէն խաչեր, այլ՝ Յիսուսը սիրողներն ու Անոր աջակերտները, սրբարար Խաչը կը կրէին իրենց *սրտի՛ն* և մարմիններուն, իրենց ստացած *վերքերո՛ւն* վրայ: Ներկայ դարը կը խաչակնքէ մկրտուողները մետաղեա՛յ խաչերով, իսկ առաքեալները մկրտեցին նորահաւատները. *«Տէր Յիսուս Բրիստոսի՛ անու նով»* ու Խաչեցեալին զօրութեամբը:

Ներկայ դարը շեղած է Գողգոթայի չարչարանքի նեղ ճամբէն, ու կը հետեւի կռապաշտական նիւթի՛ և պարծանքի սնապարծ լա՛յն ճամբուն, որ կը տանի անեացման ու մեռելութեան: Եկեղեցիներու սոյն դրամապա՛շտ շուռայտանքին պատճառաւ, անստուեր Լոյս Յիսուս ըսաւ.

«Մարդու Որդին երբ գայ, արդե՛տ հաւատ պիտի գտնէ՛ երկրի վրայ»--Լուկ. ԺԸ.8:

Եթէ վերեւ գրուածները խիստ են և անընդունելի, կ'արժէ կարդալ *Լեռան Զարոզը* (Երանելիները) անգամ մը եւս--Մատթ. Ե.3:

«Երանի՛ հոգիով աղփասներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը: ***Երանի՛*** սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն: ***Երանի՛*** հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը: ***Երանի՛*** անոնց, որոնք արդարութեան Բաղն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագենան: ***Երանի՛*** ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն: ***Երանի՛*** անոնց, որոնք սիրտով մահուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն:

Երթնի՝ անոնց, որոնք խաղաղութեան հաստատատումին համար կ'աջխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

Երթնի՝ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արժայութիւնը: **Երթնի՝** ձեզի, երբ մարդիկ նախատեն և հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի գրպարութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալնուդ համար:

Տնծացէ՛ք և ուրախացէ՛ք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է երկինքի մէջ»:

Մայիս 17, 2002

Քորոնթօ